

— Դու ոչ զիս կը ճանչես եւ ոչ իմ ընկերներս, եւ տղու մը պէս կը իւոսիս. վախենմ, որ ետքը շատ պիտի զոջաս:

Հագիւ թէ այս խօսքերը զրուցեց Գուրգէն՝ ահա երկու-երեք սպասաւոր ներս վազեցին լուր տալով թէ երկու հարիւրի չափ ձիաւոր կը յարձակէին բերդին վրայ եւ մեծ աղաղակներով կ'ուզէին իրենց ընկերները, որ ներսն էին:

Իսկ յոյն իշխանը ոտք ելաւ եւ աչքերը բանալով հարցուց թէ դռները լաւ գոցեր ամրացուցե՞ր էին. եւ երբ գոհացուցիչ պատասխան առաւ, այն ատեն հեզնական եւ գոռոզ ծիծաղով մը դարձաւ Գուրգէնին,

— Դուք դաւաճանութեամբ եկեր մեր վրայ՝ առանց իմանալու ծուղակն ինկեր էք, թէ որ ձեր կեանքը կ'ուզէք ազատել ձգեցէք այդ զէնքերը եւ անձնատուր եղէք,— ըսաւ:

Իսկ Գուրգէն ոտք ելնելով հանդարտութեամբ եւ ահագին սուրը մերկացնելով՝

— Անձնատուր լինելու եթէ մարդ կայ այստեղ մենք չենք այլ դուք էք, փուճ կենդանիք, գոչեց եւ ձախ ձեռք յոյն իշխանին թելէն յափշտակելով տղու մը պէս գետին զարկաւ եւ ոտքը վրան դնելով, թո՛ղ գայ ո՛վ որ համարձակի զքեզ ազատելու այս վիճակէն:

Խոսքով եւ Աշոտ մերկ սուրերը ձեռուընին ոտքի վրայ էին, նոյնպէս յոյն պահապանք սուրերը մերկացեր անշարժ մնացեր էին ապշեալ, եւ չէին գիտեր թէ ի՞նչ ընեն: Իսկ Թեոփիլոս այդ սոսկալի ոտքին տակ ճնշեալ՝

— դատեցէ՛ք զիս, աղատեցէ՛ք,— կը գոչեր խեղդուկ եւ ողորմուկ ձայնով:

— Թէ որ ոտք մը առաջ առնուք,— կ'ըսէր Գուրգէն պահապանաց, իւր պատերազմական ձայնը հանելով,— ձեր տերը որդի մը պէս կը ճգմեն